



Open Government Partnership

Independent Reporting Mechanism

Armenia: Comment Received on the End of Term Report for third action plan, 2016-2018

The IRM received the following comments in Armenian from Lilia Afrikyan, Government Staff of the Republic of Armenia and point of contact to the Open Government Partnership:

Table 3 Level of consultations during implementation (pg. 5)

Եթե խոսքը վերաբերում է ԲԿԳ օրակարգին (գործողությունների ծրագրին), ապա այստեղ գործում է ուղիղ համագործակցություն հանրության հետ:

Կառավարությունը մշտապես արձագանքել է ԲԿԳ շրջանակներում առաջարկություններ կայացրած քաղաքացիների առաջարկներին՝ տալով պարզաբանում դրանք ծրագրում ներառելու, կամ չներառելու վերաբերյալ և վերջապես գործողությունների ծրագրի հրապարակումից հետո տեղադրվում է ամփոփաթերթ:

Commitment Overview table (pgs 8-9)

Հանձնառությունը համապատասխանում է թափանցիկությանը և հաշվետվողականությանը:

Commitment 1: 'Did it open government?'

Կարծում ենք, որ հանձնառությունը համապատասխանում է ԲԿԳ-ին, քանի որ հանրության համար հասանելի են գործողությունների հաշվետվությունները, որտեղ նշված է գործուղվող անձը, նպատակը և արդյունքները: Քաղաքացին, կամ հետազոտողը կարող է տեղեկանալ պետական բյուջեի միջոցները արդյոք արդյունավետ են ծախսվել, թե ոչ: Այլ հարց է, որ հանրությունը հետաքրքրվածություն չի ներկայացնում:

Commitment 3: Potential impact

Կարծում ենք, որ հանձնառությունը փոխակերպող է, քանի որ տեղեկատվությունը առավել բաց է դարձել հետազոտողի, կամ որոնողի համար: Օգտագործվել է բաց ստանդարտների ձևաչափը:

Commitment 1

Commitment table- OGP value relevance (pg. 11)

Հանձնառությունը համապատասխանում է թափանցիկությանը և հաշվետվողականությանը:

Commitment table- "Did it Open Govt?" (pg. 11)

Կարծում ենք, որ հանձնառությունը համապատասխանում է ԲԿԳ-ին, քանի որ հանրության համար հասանելի են գործողությունների հաշվետվությունները, որտեղ նշված է գործողվող անձը, նպատակը և արդյունքները: Քաղաքացին, կամ հետազոտողը կարող է տեղեկանալ պետական բյուջեի միջոցները արդյոք արդյունավետ են ծախսվել, թե ոչ: Այլ հարց է, որ հանրությունը հետաքրքրվածություն չի ներկայացնում:

"Did it Open Govt?" narrative (pg. 12)

Հաշվետվությունների ապահովման իրավական ակտերում նշված չի եղել ֆինանսական կոմպոնենտը: Հաշվետվությունները ներառում են պետական բարձրաստիճան/տարածքային կառավարչական պաշտոնյաների գործողումների օրը, վայրը, նպատակը և արդյունքները: Կառավարությունը բաց է առաջարկությունների համար: ԱՄՆ կողմից առաջարկվել է ներառել համապատասխան փոփոխությունը, որը ընդունվել է կառավարության կողմից, առաջիկա փոփոխության հնարավորության դեպքում կկատարվի ֆինանսական բաղադրիչի ներառումը:

Carried forward? (pg. 13)

ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 19-ի 1230 որոշմամբ սահմանված է միատեսակ ձևաչափ հաշվետվությունների համար:.

Commitment 2

End of Term Completion (pg. 16)

Հարկ է նշել, որ դիտողությունը անհիմն է, քանի որ ոչ բոլոր նախարարություններն են տրամադրում դրամաշնորհներ, հետևաբար հաշվետվության բացակայությունը կայքում չի կարող փաստել, որ գերատեսչությունները չեն հրապարակում հաշվետվությունները:

"Did it Open Govt?" narrative (pg. 17)

Կառավարությունը պատրաստակազմ է բարելավել դրամաշնորհների ոլորտը և ԲԿԳ-Հայաստան 2018-2020 թթ. գործողությունների ծրագրի 2-րդ հանձնառությունը անրադառնում է հենց դրամաշնորհների տրամադրման մրցույթային կարգի սահմանմանը:

Commitment 3

Carried forward? (pg. 22)

«Ինտերակտիվ բյուջե» համակարգի կատարելագործված տարբերակի մասին իրազեկումը տեղադրված է եղել ՀՀ ֆինանսների նախարարության կայքում: Միաժամանակ, հաշվի առնելով կատարելագործված համակարգի մատչելիությունը, նպատակահարմար չենք գտնում միջոցներ ծախսել ուսուցման կամ ուղեցույցերի մշակման համար, քանի որ կայքից օգտվողների խումբը դրանք հետազոտող/լրագրողներն են, կամ պետական կառավարման համակարգի աշխատակիցները, որոնք տիրապետում են գործիքին:

Commitment 6

Commitment aim (pg. 34)

Միասնական e-license ռեգիստրը հասանելի կլինի հանրությանը, քանի որ դա սահմանված է օրենքով: Համակարգը կապահովի ռեգիստրում առկա լայն տեղեկատվության հասանելիությունը: